ԹԱՆԿԱԳԻՆ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐ

Ձեզ են դիմում «Սպաները հանուն վերակառուցման» կոմիտեի անդամները, որը գործում է արտակարգ դրության շրջանի տարածքում և համամիտ է ձեզ հայտնի զինծառայողների «Ճշիտ» համամիութենական կազմակերպության գաղափարներին: Լինելով ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության իդեալների կողմնակիցներ, զգալով սեփական պատասխանատվության ոչ քիչ բաժինը այսօր Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձությունների համար, մենք ուզում ենք ձեզ ասել հետևյալը.

— Մեզ հասկանալի է, որ մեզ վրա դրված է ԼՂԻՄ-ի հայերի ինքնորոշման ժողովրդավարական շարժումը ի հանուն Ադրբեջանի ազգայնամոլական հանցավոր ղեկավարության և երկրի ղեկավարության մեջ կաշառված շրջանների ճնշելու կոչված պատժիչ ուժի անազնիվ դերը:

— Մեզ համար ամոթալի է գիտակցել, որ շրջանի զինվորական հրամանատարությունը վարում է արտահայտված հակահայկական քաղաքականություն: Դա վերաբերում է պարետության քաղաքաժնին, որն անձնակազմին մշակում է հայատյացության ոգով, շարքայիններին, սերժանտներին, սպաներին մեկուսացնում է տեղի բնակչությունից, նույնիսկ պատերազմի և աշխատանքի վետերաններից: Դա վերաբերում է զինվորական պարետ, գեներալ-մայոր Վ. Գ. Սաֆոնովին, որը մեր ունեցած տեղեկությունների համաձայն քիչ գումար չի ստացել ադրբեջանական կողմից, մասնավորապես յուրացրել է 869 հազար ռուբլի, որն անցյալ տարվա վերջերին վերցրել է ադրբեջանցի հանձնակատարներից: Արյունահեղություն թույլ չտալու կոչված չեզոք ուժ լինելու փոխարեն զինվորական պարետությունը հանգամանքներ է ստեղծում Գ. Պոլյանիչկոյի գլխավորած Ադրբեջանի ղեկավարության ներկայացուցիչների հետ, նրանց հանցավոր քաղաքականության իրականացման գործում, ինչը համարվում է պետական հանցագործություն, արատավորում է բանակի պատիվը:

— Մենք գիտենք, որ շրջափակումը վերացնելու վերաբերյալ մեծադոզոր խոստումները ԼՂԻՄ-ի համար վերածվեցին դրա խստացման: Մինչև օրս շրջափակված է Գորիս — Լաչին — Ստեփանակերտ ճանապարհը, և դա արվում է բանակի ձեռքերով: Իսկ շրջափակման քողի տակ իրականացվում է ԼՂԻՄ-ի բընակեցումը ադրբեջանցի եկվորներով, խեղդվում են ԼՂԻՄ-ի հայերի տարրական քաղաքացիական և ազգային իրավունքները:

Այսօր մենք ձեզ զգոնության կոչ ենք անում: Մի տրրվեք պրովոկացիայի, ինչը բընավ չի նշանակում ձեր արդար պայքարի դադարեցում: Հիշեցնք, որ սպայական անձնակազմի մեջ կան ազնիվ քաղաքացիներ, որոնք ստիպված են կատարել իրենց պետերի անբարո հրամանները: Մենք ձեզ հետ ենք, թանկագին ղարաբաղցիներ, և մեր հնարավորության սահմաններում ամեն ինչ կանենք ձեզ օգնելու համար:

«ՍՊԱՆԵՐԸ ՀԱՆՈՒՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԿՈՄԻՏԵ

Ուրեմն՝ ի՞նչ։ Դեռ կան ազնիվ, ազնվական սպաներ, որոնց հոգում անմար է դեսանրիստների սասլետական հայապիրությունը։ Եվ դրանում է ինչպես մեր, այնպես էլ ռուս ժողովրդի փրկությունը...